ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

21 հունիսի 2012թ. թիվ 233

Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159 հոդվածների, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Մ. Մարգարյանի դիմումը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Միեր Մարգարյանին տրամադրել 2012 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդը ս/թ հուլիսի 9-ից մինչև օգոստոսի 3-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

2. Մ.Մարգարյանի արձակուրդում գտնվելու ժամանակ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունների կատարումը դնել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Ա.Եդոյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. հունիսի 21
ք.Վանաձոր